

այլև զբաղվեց թատրոնի և դրամատուրգիայի տեսության հարցերով, ձգտեց նշմարիտ ուղղությամբ տալ թատերական գործիչներին նա խորապես գիտակցում էր, որ նորաստեղծ հայ թատրոնը չի կարող ծաղկել ու հարստանալ, դասնալ ժողովրդի կրթիչն ու դաստիարակը, առանց յուրացնելու մարդկության թատերական կուլտուրայի մեծ նվաճումները:

ՀԲ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՍԽԱՆՏ ԴՈՒՆԴՍԱՔԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԴՐՔՈՒՄ

Հայ ժողովրդի բազմադարյան կուլտուրան, պատմությունն ու լեզուն, գրականությունն ու արվեստը վաղուց են դարձել բազմակողմանի ուսումնասիրության առարկա: Նույնը չեն կարող ասել հայ բժշկագիտության մի այնպիսի ընդգավառի մասին, ինչպիսին է դատական բժշկությունը:

Դատական բժշկությունը բժշկագիտության այն ճյուղն է, որն իր գործնական բնույթով սերտորեն կապված է ժողովրդի կյանքի սրցիալ-տնտեսական պայմանների, երկրում տիրող օրինականության և գործող իրավաբանական նորմերի հետ, միշտ պատկերացում է տալիս տվյալ ժողովրդի բարքերի, սովորույթների մասին:

Հայ դատական բժշկության պատմության հարցերը լուսարանելու համար անհրաժեշտ է օգտագործել ընդհանուր բժշկությանը և հատկապես հայ հին իրավունքին վերաբերող հուշարձաններում պահպանված տեղեկություններն ու փաստերը:

Միջնադարի դատական բժշկության մասին հետաքրքրական տեղեկություններ են պարունակում Դավիթ Ալավկա որդու կանոնագիրքը, Մխիթար Դոշի Դատաստանագիրքը և հատկապես Սմբատ իշխանի (Դունդստարի) Դատաստանագիրքը (XIII դ.): Հետաքրքրական է պարզել այն հարցը, թե միջնադարյան դատական պրակտիկայում ինչպես են կատարել այնպիսի գործերի քննարկումները, որոնց մասին արդար որոշում կայացնել հնարավոր չէ առանց բժշկությունից բիշ թե շատ հասկացող մարդկանց մասնակցության:

Մեզ հետաքրքրող պատմական ժամանակաշրջանում, Հայաստանում հայ բժիշկների կողմից, ինչպես հայտնի է, կատարվել են բարդ վիրահատումներ: Այդ են հաստատում Դավթի կանոնները (XII դ.), որոնք ի հակադրություն արարական բժշկության, պարտավորեցնում էին հարկ եղած դեպքում թույլատրել դրանց կատարումը ինչպես կին, այնպես էլ տղամարդ մասնագետներին²:

Եթե մանկաբարձի անփորձության հետևանքով մանուկը մահանում էր, ապա ըստ Դավթի կանոնների, ա ն դիտվում էր իբրև սպանություն:

Հոգվածի բովանդակությունից միանգամայն պարզ է դառնում, որ Դավթի ժամանակ արդեն գոյություն են ունեցել ոչ միայն ընդհանուր պրոֆիլի բժիշկներ, այլև բժշկական նեղ մասնագիտություն ունեցող մանկաբարձներ՝ իրենց որոշակի պարտականություններով ու իրավասություններով: Ըստ Կանոնագրի, այդ մասնագետները պետք է կարողանային որոշել բժշկական այնպիսի բարդ խնդիրներ, ինչպիսիք են՝ պտղի կենդանի լինելը, ծննդաբերության ժամանակ մոր առողջության և մանկան կենսունակության վիճակը, որի հիման վրա պետք է վճռվեր այն հարցը, թե ում կենդանի թողնել՝ մո՞րը, թե՞ մանկանը: Մահապատիժ էր սպառնում ա ն մանկաբարձին, որը ճիշտ չէր կարողանա վճռել այս շափազանց կարևոր ու դժվար հարցերը: Ինքնին հասկանալի է, որ դրանց ճիշտ լուծումը կարող էր տալ համապատասխան մասնագետը, և միայն մասնագետ բժիշկը կարող էր որոշել մյուս բժշկի թույլ տված սխալը, մի բան, որ, ի դեպ, ուժի մեջ է և այսօր:

¹ Տե՛ս Գ. Դ. Հարությունյան, Նյութեր մանկաբարձության գրության մասին, Հայաստանում XI—XII դարերում, ս.ճանձնատիպ «Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի աշխատություններ» № 1-ից, Երևան, 1948, էջ 65—76: Ա. Ս. Կծոյան, Նյութեր միջնադարյան Հայաստանի վիրաբուժության վերաբերյալ, առանձնատիպ «Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի աշխատություններ» № 1-ից, Երևան, 1948, էջ 101—114:

² Պրոֆ. դոկտ. Ա. Աբրահամյան, Դավիթ Ալավկա որդու կանոնները, Երևան, 1953, էջ 34 (հոդվ. Հէ):

Օրենքի խստապահանջությունը մեզ հիմք է տալիս նշելու, որ բժշկի մասնագիտական «խալի հարցը քննվել է բժիշկ-մասնագետի կողմից և նրա տված ցուցմունքը կամ եզրակացությունն է հիմք դարձել դատավճռի համար»:

Սմբատի Դատաստանագրքում տեղ են գտել ժամանակաշրջանին բնորոշ բոլոր, հատկապես անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները, ինչպիսիք են՝ սպանությունը, մարմնական վնասվածքներ հասցնելը, բռնարարությունը, արհեստական, մեխանիկական վիժումները, բժշկի անփութության կամ շահախնդրության պատճառով հիվանդի վնասվելը և այլն: Սմբատի Դատաստանագիրքը, ի տարբերություն նախորդ օրենսդրական ակտերի, ունի պատժի ավելի խիստ սանկցիաներ:

Դատաստանագիրքը սպանության համար մեղադրվող անձին ենթարկել է պատժի՝ հաշվի առնելով հանցանքի կատարման դիտավորյալ կամ անզուգարար բնույթը: Կարևոր է նաև այն հանգամանքը, թե հանցագործությունը ում կողմից և ում դեմ է կատարված. այստեղ տեսնում ենք դասակարգային և կրօնական խիստ սահմանազատում, մի բան, որ հատուկ է ֆեոդալական հասարակությանը: «Եթե քրիստոնե զորիստունը սպանել կամօր,—ասված է Դատաստանագրքում,—նա նորա արևան վրէժխնդիրն թափառուն է, որ խրատ է յապաշխարութիւն: ասցնէ: Եւ թէ յոչ կամաց լինի՝ խրատ չկայ, զկէս գնույն տալ ազգին, և տուգանք գնդանելն ըստ կամաց թագաւորին լինի», իսկ «...թէ այլազգի զորիստունը սպանել՝ մեռնի, եւ թէ յոչ կամաց սպանել, երկու ձեռն կտրուի և արեան գինն վճարէ»³ և «...եւ պա թէ անօրէնն զորիստունը սպանել, նա վասն մեծ ատելութեան, որ կայ ի մէջն, կու հրամայլ օրէնքս, որ անհնար մեռնի անօրէն սպանողն»⁴:

Դժբախտ պատահարի հետևանքով առ սջացած մահվան դեպքերը, ըստ Սմբատի Դատաստանագրքի, ենթակա են հատուկ ուսումնասիրության: Այսպես, եթե մեկը ջրհոր բաց անել և ժամանակին չփակել, որի հետևանքով տեղի ունենար մահ, ապա քննութիւմը պետք էր պարզել, թե այն երբ է տեղի ունեցել՝ ցերեկը, թե գիշերը, անձը հարբած էր, թե զգաստ, դեպքը հետևանք էր դիտավորության, թե իսկապես դժբախտ պատահարի, որոնցից էլ կախված էր սահմանվելիք պատժաչափը:

Այս կապակցությամբ օրենսդիրը դրել է. «Եթէ որ իր հորն բանայ եւ մենակ մարդ ի ներս ածէ ու մարդն ի նզէն խեղդվի, նա արեան տեր է ածողն: Բայց տեսնուլ պիտի և փնտուլ և իմանալ զմտելոյն որպէսն և վարձն ու ամեն կերպ»⁵: Այստեղ «տեսնուլ»-ը նշանակում է պիտի տեսնել, իսկ «փնտուլ և րսանալ»-ը՝ զննել և ուսումնասիրել դիակը, որոշելու համար, թե ինչից է առաջացել մահը:

Ուշագրավ է աշխատանքի ընթացքում մահացության դեպքերը տարբերակող հոդվածը: Այն մարդն, որ իւր գործոյն պատճառով մեռնի, նա անպարտ են տերբրն, բահրակ այն տէրն որ զամենն պնդել լինի և արիացուցել զիր գործաւորն և զհնազանդքն: Ապա թէ տէրն յայն բան ուղարկէ զմարդն, որ չլինի իր գործ յինր կշիթած ու վնասի, նա այն պարտական է և մահապարտն: Նշանակում է, աշխատողի հանկարծամահության դեպքում տերը պատասխանատու չէր, իսկ եթե մահը հարկադրական աշխատանքի հետևանք էր, ապա պետք էր պարզել, թե մահացողը տվյալ աշխատանքին ծանօթ էր թե ոչ, եթե այո, ապա տերը այդ դեպքի համար պատասխանատու չէր, իսկ եթե մահացողը հմուտ չէր գործին՝ այս դեպքում տերը ենթակա էր պատասխանատվության:

Ինքնասպանության դեպքերի համար ևս պահանջվել է կատարել բազմակողմանի քննություն՝ ինքնասպանության հասցնելու անգամանքները, պայմաններն ու կատարման եղանակը պարզելու համար:

Եթե ինքնասպանությունը կատարվել է ընտանոցական նորմալ վիճակում, ապա արգելվել են ինչպես թաղման, այնպես էլ պատարագի արարողությունները, իսկ եթե այն կատարվել էր հոգեկան վիճակի խանգարման պայմաններում, ապա թույլատրվել է կատարել թաղում ըստ օրենքի:

Այդ առթիվ Սմբատը գրում է. «աղէկ հետարբրի պիտի լինել, զի անրեկ մահն ի բազումս բաժնին, են որ խելքի են ու իրենց կամաւ կու մեռնին. զայսոնք րնաւ ոչ թաղման ար»:

3 Ա. Ղլտճյան, Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Դունդստարի) կամ Կիլիկեան Դատաստանագիրք 13-րդ դարի, Ս. Էջմիածին, 1918, էջ 17—18:

4 Նույն տեղում, էջ 26 (հոդվ. ԻԹ):

5 Նույն տեղում, էջ 20—21 (հոդվ. Զ):

6 Նույն տեղում, էջ 72 (հոդվ. ԺԽԶ):

ժանի անել և ոչ պատարագի. և են որ յրբեք խելացն ի դուրս. վասն ցաւոց՝ նա ղայնոց կարգն պատեն է կատարել»⁷:

Սմբատի Դատաստանագիրքը (հոդվ. ԺԾԵ) տարբերակում է դիտավորյալ և ոչ դիտավորյալ սպանությունները, մանրամասն կերպով շարադրում նրանց տեսակները, մի քան, որ մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն հայ իրավունքի, այլև դատական բժշկության պատմության համար: Ինչպես երևում է Դատաստանագրքի համապատասխան հոդվածներից, սպանության գործերը քննելիս հաշվի են առնվել հետևյալ հանգամանքները՝ մարմնական վնասվածքը ուժ կողմից է հասցված—չափահաս թե անչափահաս անձի կողմից, երբ է տեղի ունեցել մահը՝ ժեծից, վնասվածք ստանալուց անմիջապես հետո, թե մի քանի օր անց, հարվածը, վնասվածքը մահացու է եղել, թե այն արագացրել է մահը: Եթե մահը նույն օրն էր տեղի ունենում, ապա պատժաչափը ավելի խիստ էր, քան եթե այն տեղի ունենար ժեծից մի քանի օր անցնելուց հետո: Ութը որ զիր ծառայն քշտէ ու սպաննէ, նա զարեան գինն ի դարպասն վճարէ, զի սպանելն և խրատելն պարոնացն է. քայց թէ ի զարկուց ժամն շմեռնի, ու երկու օր անցնի, նա այլ տուգանք չտայ, թէ յետև մեռնի, զի իր ծառայ է»⁸:

Դիտավորյալ սպանությունների դեպքում որոշվում էր, թե մահը ինչի հետևանք է՝ հարվածի, թե թունավորման: Եթե հարվածի հետևանք էր, ապա ինչով էր խփված՝ քարով, գավառանով, բռնացրով, թե այլ բուք իրերով. «նոյնպէս և այս այլ է յերկուքէն, որ գիտեաց որ, թէ զչարկամն կու սպաննէ ու զընկերն քշտէ և սպաննէ: Եւ կամաւորն այն է, որ տայ բրով և զմէկայն ի վայր դնէ ու սպաննէ, կամ քարով քշտէ նա այն հայնց է, զէդ բրով եզարկ ու եսպան: Եւ այս ազգի սպանմունքս շատ են, քայց յայսչրուցս կարէ որ զայն իմանալ: Եւ է այլ, որ մահղեղով սպաննէն, և են, որ վասն սիրոյ դեղ տան և սպաննէն. և այսոր ընդ այլ մահապարտ են համարած՝ թէ այլ լինի թէ կին, եւ մահու վճար առնեն»⁹: Հիշատակվում են նաև կացնով, նիզակով, նետով և այլ սուր գործիքներով հասցված վնասվածքները: Դիտավորյալ սպանության նշված դեպքերի համար օրենսդիրը նախատեսել է մահապատիժ:

Եթե սպանությունը կատարվել է անչափահասների կողմից, ապա պետք է նախ որոշվեր հանցագործի ճիշտ տարիքը, որովհետև օրենքը կատարած հանցանքի համար նախատեսված պատժաչափը լրիվ կիրառում էր 12-ից քարձր տարիք ունեցողների նկատմամբ, 10—12 տարեկանը պատժվում էր պատժի կեսի չափով, իսկ 10 տարեկանից ցածր՝ 1/3-ի չափով:

Մարմնական ոչ մահացու վնասվածքների դեպքում որոշվել է վնասվածքի կոտրվածք կամ վերք լինելը, և հանցագործից գանձվել տուժվածի անաշխատունակության օրերի վարձը, դեղորայքի և բժշկության ծախսերը. «Եթէ որ, որ կատարեալ հասակին լինի և պեղծ կամօք մահ գործէ, կամ ի քան անէ, որ մեռնի, նա մահապարտ է. և թէ կոտրի կամ խոց լինի, նա զբժշկին և զդեղերոյն ծախքն ինք տայ, և զկերակրոյն և զպակասն յիր քանն վճարէ»¹⁰:

Անբարոճական վարքի համար կնոջը սպանող ամուսինը ենթարկվել է քրեական պատասխանատվության, քայց ոչ մահապատժի. «Եթէ որ վասն բողոթեան զիր կնիկն սպաննէ, նա պանելն չէ հրամայած, այլ թողուլն. և պատեն է խոստովանահօտն, որ զսպանողն տեսնու, նոյնպէս և զսպանածն ու իմանայ զիրենց կենն»¹¹, այսինքն հարցարանել ամուսնուն և կատարել ուղղվածի դիակի զննում, իսկ եթե կինը պատահաբար «շմեռնի, նա զզարկն փնտոնն ու տեսնուն»¹², այսինքն կատարել տուժվածի վնասվածքների զննում: Այս ամենը թույլ են տալիս տեսնել, որ միջնադարում սպանության գործերը քննելիս պարտագիր է եղել դիակի ու մարմնական վնասվածքների զննումը:

Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանում զինման և ուսումնասիրության են ենթարկվել ինչպես հասարակ ծագում ունեցող անձնավորությունների, այնպես էլ ազնվականների և նույնիսկ թագավորների դիակները: Եթե X դ. թույլատրելի է համարվել թագավորի դիակի էքսհումացիան, ուսումնասիրությունը և նույնիսկ անդամահատումը¹³, ապա պետք է ենթադրել,

7 Նույն տեղում, էջ 59 (հոդվ. ԺԴ):

8 Նույն տեղում, էջ 66 (հոդվ. ԺԻԲ):

9 Նույն տեղում, էջ 74—75 (հոդվ. ԺԺԶ):

10 Նույն տեղում, էջ 75 (հոդվ. ԺԾԷ):

11 Նույն տեղում, էջ 51 (հոդվ.—Եթէ որ զիր կինն սպաննէ վասն բողոթեան):

12 Նույն տեղում, էջ 22 (հոդվ. ԺԱ):

13 Е. А. Макарян. Эксгумация трупа в Армении в X веке, в кн. «Сборник трудов бюро главсудмедэкспертизы и кафедры судебной медицины Ермединститута», вып. 1, Ереван, 1956, էջ 61—62:

որ առավել ևս հնարավոր է եղել հետազոտական նպատակով հասարակ ծագսան անձնավորությունների դիակների հետ զանազան էքսպերիմենտներ կատարել: Բազմաթիվ վկայություններ հաստատում են, որ Հայաստանում XIII դ. կատարվել են կենդանահատումներ¹⁴: Մի փոքր ավելի ուշ շրջանից ունենալ արդեն որոշակի դիտողություններ խեղդամահությունների նշանների և մահվան բնույթի մասին, դիտողություններ, որոնք չէին կարող ձեռք բերվել կենդանահատումների միջոցով, ուստի միանգամայն ակնհայտ է, որ կենդանահատումներին զուգընթաց, իսկ ավելի հավանական է նրանից էլ առաջ, կատարվել են դիահերձումներ և նույնիսկ պաթանատոմիական հերձումներ¹⁵:

էքսհումացիաները, դիահերձումները և կենդանահատումները Հայաստանում կատարվել են շատ ավելի վաղ շրջանում, քան շատ ու շատ երկրներում:

Դեռ ավելին, օրենքով նախատեսված է եղել սպանությունների ժամանակ կատարել ոչ միայն դիագնոստիկ, այլ տեղագնություն, երբ դիակը մնում էր դեպքի վայրում: Նման քննությունը կատարվել է դատավորների և ավագների մասնակցությամբ:

«Եթե որ զտղայ,—կարդում ենք Դատաստանագրքում,—որ վասն բողոթեան կամ վասն այլ ցեղ պեղծ գործոյ խեղդէ կամ սպաննէ, կու հրամայէ օրէնքս, որ զէտ այլ կենդանացնել չկարէ զինք, նա հայնց և ոչ քաւել, ապա ինքն հայնցեղ մահով մեռնի, զէտ այն տղայն, թէ այր և թէ կին և թէ երկուրն: Բայց ակամայ պատահելոցն ապաշխարութիւն է»¹⁶: Ուրեմն, օրենքը հանցագործին, լինի տղամարդ թէ կին, դատապարտում էր մահվան, բայց մեծ հմտություն էր պետք որոշելու համար, թե սպանությունը կատարվել է խեղդելու, թե որեւէ գործիքով հարվածելու միջոցով, իսկ եթե պարզվեր, որ այն արդյունք է «ակամայ պատահելոցն», ապա փոխվում էր և պատժատեսակը:

Մարմնակաւն ոչ մահացու վնասվածքների դեպքում՝ անհրաժեշտ է եղել պարզել վնասվածքի տեսակը՝ «սոսկ վերք» թե «մահացու վերք», «ե՛ւ կոտրած զօղւած կենայ, զինչ ու լինի, կամ ակռայ ձգած, ...Սւ այլ մանտր մունտր ծեծերն որ լինեն՝ կապոյտ կամ անարգանք կամ քաւ չելով ուժով, նա կու հրամայէ օրէնքս, որ այնոր վճարն ծեծնօր և բրով լինի հայնց»¹⁷, կամ «Թէ վնասէ տղայ զտղայ և ի վնասելն խոցէ կամ կոտրէ, նա նոյնպէս ի հասակն հային ու ի խոցն և զղեղգինն յայնոր վերայ դնեն և նոյնպէս և թէ լողկնալն զիրար խեղդեն ի միմեկն, նա պատեհ է, որ ի հասակն հային և յայնոր շարն»¹⁸:

Դատաստանագրքերի հոդվածներից երևում է, որ ժամանակին լավ պատկերացում են ունեցել մարմնական վնասվածքների տեսակների ու պատճառների մասին, այդ կարգի գործեր քննելիս հաշվի են առնվել՝

1. Մարմնական վնասվածքը մահացու է, թե ոչ:
2. Մահը տեղի է ունեցել հարվածի հետևանքով, թե այլ պատճառներից՝ թունավորման, հանկարծամահության, տրավմաի և այլն:
3. Հարվածի հետևանքով է առաջացել վնասվածքը (անդամի կորուստ, կոտրվածք, զգայարանների, օրգանների վնասվածք), թե ոչ: Վնասված օրգանների կարևորությունը օրգանիզմի համար:
4. Մարմնական վնասվածքի դեպքում տուժողը ինչքան ժամանակ է մնացել անաշխատունակ (որոշվում էր բուժման տևողությամբ և արդյունքով):
5. Մարմնական վնասվածքի հետևանքով էր տեղի ունեցել վիժումը, թե այլ պատճառներից, որոշվում էր նաև հղիության ժամկետը:
6. Վնասվածքը ինչպիսի գործիքով է հասցված՝ բութ թե սուր:
7. Հարվածը ինչպիսի ուժով է հասցված, եթե առաքել գործիքներ են օգտագործվել, ապա որ գործիքով հասցրած վնասվածքն է եղել ծանր կամ մահացու:

14 Լ. Ս. Խ ա չ ի կ յ ա ն, Դիահերձումները հին Հայաստանում, տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. գիտ.), Երևան, 1947, № 4, էջ 90:

15 А. С. К ц о я н, Патолого-анатомические представления армян врачей в эпоху расцвета феодальных отношений, Известия АН Арм.ССР, том XII, № 6, Ереван, 1959, էջ 89—98:

16 Ա. Ղ լ տ ճ յ ա ն, Դատաստանագրքը Սմրատ իշխանի, էջ 70 (հոդվ. ՃԼԹ):

17 Նույն տեղում, էջ 70 (հոդվ. ՃԽԱ):

18 Նույն տեղում, էջ 66 (հոդվ. ՃԼԿ):

8. Մահը առաջացել է առաջին հարվածից հետո, թե հարվածների կրկնությունից, իրավարանական տեսակետից այստեղ հանդես է գալիս սպանության եղանակի ավելի նվազ տանջալի լինելու հանգամանքը։ Հայտնի է այն դրույթը, որ եթե մահացու վնասվածքը եղել է առաջինը, ապա հետագա հարվածները չեն ծանրացնում հանցագործի մեղքը, և ընդհակառակը՝ եթե մահացու վնասվածքը եղել է վերջինը, ապա նախորդ վնասվածքները դիտվում են որպես ծանրացնող մոմենտներ՝ խոշտանգում, տանջալից սպանություն և այլն։

9. Հանցագործը հարբած վիճակում է այդ հանցանքը կատարել, թե լուրջ։

Հետաքրքրություն են ներկայացնում նաև սեռական զանազան հանցագործությունների հարցերը։ Անձի սեռական անձեռնմխելիությունը եղել է ժամանակին գործող բոլոր օրենքների ուղղորդության կենտրոնում։ Տվալ դեպքում, մեղ ավելի հետաքրքրում է այն հարցը, թե ովքեր են զբաղվել ու պարզել այդ կուգի վիճելի հարցերը։ Սմբատի Դատաստանագրքի 27 հոդվածում կարդում ենք. «Եթե որ կին ունեայ ու չկար իր այրկութին անել, նա չէ պատեհ, որ կինն զինք ի փրթման թողու, թէ չէ՛, չկարէ օրինօք այլ այրկան լինել։ Ապա եկեղեցու՛մ կարէ կեցցենել թէ այր չէ. և առնու ազատութեան թուղթ և այնով ամուսնանալ կարէ»¹⁹, ուրեմն ամուսնու սեռական անգործությունը որոշվել է եկեղեցու կողմից և տրվել է համապատասխան փաստաթուղթ ամուսնալուծության համար։ Կնոջ կույս լինելու և չլինելու վեճերը պարզելու համար նույնպես կատարվել է մասնագիտական զննում։ Ըստ Մխիթար Գոշի, այն կատարվել է կանանց կողմից, իսկ Սմբատի Դատաստանագրքում այդ մասին կոնկրետ ոչինչ չի ասված։

Բռնաբարությունների վերաբերյալ կարդում ենք. «Եթե որ որ կույս աղջիկ բռնէ ու ուժ անէ. և զինք ի յանձնէ հանէ, նա թէ խնամէխօսւած լինի, նա դատաստանն զէդ կարգին լինայ որ գրեցար. եւ թէ ոչ, նա տայ հօրն իսուն դրամ ու պսակվի ընդ ինք անբաժանելի։ Ապա չկամենայ, նա կտրեն զձետն։ Իայց պարտ է գիտել, որ երկրին բնակիչք ի պարոնին պա՛ն են, և այն, որ տառապեալ աղջիկ գտնու ու իր ուժ անէ, նա պարոնին է ուժն։ Եւ ի յա տ տեղոյ մեծ փնտոողութիւն պիտի. և հայել ի կտրիճին ուժն ու ի յաղջկանն, եւ յոչ կամալն խրատումն այնել եւ կամօքն ներումն»²⁰։ Նշանակում է, որ բռնաբարության դեպքում օրենքը պահանջել է երկու սեռին էլ ենթարկել զննության։ Բացի այդ, պետք էր նկատի ունենալ նրանց արտաքին ուժը՝ դիմադրության հնարավորութեան մոմենտը պարզելու համար, ըստ այդմ կորոշվեր՝ տեղի է ունեցել բռնաբարություն, թե փոխադարձ համաձայնություն։ վերջինիս դեպքում «տուգանք չպարտի»։

Օրենսգրքերում հատուկ տեղ է հատկացվել հղի կնոջը ծեծելու հանցանքին։ Կնոջը հղիության վիճակում ծեծելը միշտ էլ դիտվել է որպես հանցանքը ծանրացնող հանգամանք, իսկ ծեծի հետևանքով հղիության խախտումը՝ իբրև ծանր հանցագործություն։ Կովի ընթացքում եթե հարված ստանար աջատճառուոր (պտղաւոր) կին, և նա ձգէ զտղայն», ապա անհրաժեշտ էր նախ պարզել՝ վիժումը հարվածի հետևանքով է տեղի ունեցել, թե այլ պատճառով. երկրորդ՝ վիժած պտուղը ներարգանդային կյանքի որ ամսվան է համապատասխանում, եթե պտուղը լրիվ կազմավորված է եղել, հանցագործին նախատեսվում էր մահապատիժ. «Ապա թէ կերպարանք ունեայ տղայն, նա անձն ընդ անձին տուժի», իսկ «Եթէ դեռ անկերպարանք լինի և խլինք, ապա նախատեսվում էր տուգանք»²¹։

Ինքնին հասկանալի է, որ նման հարցերի պարզաբանումը ժամանակին հնարավոր է եղել. այլապես նման բովանդակություն ունեցող հոդված մուտք չէր գործի Դատաստանագրքում։

Սմբատի գրչից չի վրիպել բժշկի անփութության կամ շահախնդրության հետևանքով հիվանդին վնաս հասցնելու հանգամանքը։ Բժիշկը կարող էր ճիշտ ախտորոշում չկատարել, նշանակել հիվանդությանը չհամապատասխանող բուժում, դեղորայք, որոնցից հիվանդը կարող էր մահանալ կամ վնասվել։ Օրենքը պահանջել է քննել, պարզել այդ ամենը և բժշկին մեղադրել դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ սպանության համար։ Բժիշկը ենթարկվել է պատասխանատվության նաև այն դեպքում, երբ իր աշակերտն է սխալ բուժման հետևանքով հիվանդին մահ պատճառել²²։

Հոդվածների բովանդակությունը ցույց է տալիս, որ Սմբատը տիրապետել է իր ժամանակի առաջավոր բժշկությանը, իր Դատաստանագրքում առաջ է քաշել բժշկագիտության վերաբերյալ այնպիսի մանրամասներ, որոնք խոր մասնագիտական բնույթ են կրում։

19 Նույն տեղում, էջ 54։

20 Նույն տեղում, էջ 53 (հոգվ. 2է)։

21 Նույն տեղում, էջ 55 (հոգվ. 2Ը)։

22 Նույն տեղում, էջ 73—74 (հոգվ. ԾՄԴ)։

Ամուսնալուծության հարցում Սմբատի Դատաստանագիրքը հաշվի է առնում այնպիսի հանգամանքներ, որոնք նախորդներում բացակայում են։ Այսպես, ի տարբերություն նախորդ դատաստանագրքերի, ամուսինների անհամերաշխության դեպքերում Սմբատը թույլատրում է ամուսնալուծություն. «Ապա թէ ուրդի, որ վասն անհնազանդ լինելոյ կնկանն անհանգստութիւն կենայ յիրենց մէջն, նա կու տայն հրաման օրէնքս, որ բաժնեն, ... Զի թէպէտ եւ յառջի կանոնքն չկայ այս, որ կարէ վասն անհնազանդութեան թողուլ ...»²³։

Ամուսնալուծություն է թույլատրել Երեսգիրքը բնությամբ հաստատված հոգեկան հիվանդությունների, «գիվահարությունների» դեպքում. «Թէ գիւահարութիւն հանդիպի այրուկնոջ, նա պատեհ է, որ աղէկ քնենն և ստուգեն, ու սուտ չլինի վասն ատելութեան»²⁴, ինչպես նաև այն դեպքում, երբ առկա են եղել անբուժելի բորոտություն, կամ «գողութիւն, և կամ պիսակութիւն»²⁵, հիվանդություններ, որոնք դասվել են ժառանգարար անցնող հիվանդությունների արքրը։

Ամուսնալուծության պատճառ է համարվել նաև ամուսնուրու Այդ հարցը պարզելու համար հարկ եղած դեպքում բժշկական բնության են ենթարկվել ինչպես ամուսինը, այնպես էլ կինը՝ ծննդաբան ամուսնուր հիվանդության պատճառով է առաջացել, ապա պետք էր բժշկել՝ դեղորայքի միջոցով. «Կին որ ամուլ լինի, և տղայ չընրէ, նա պատեհ է բժշկօք տեսնուլ և իմանալ, թէ յոր դիմաց է, ի յայրկնէ թէ կնկնէ, եւ թէ ցաւ ինչ կենայ, նա ջանան դեղերով... Եւ ի վերայ ամենին զնէ զդեղն եպիսկոպոսն, զի այլ որ չունի հրաման»²⁶։ Միաժամանակ անհրաժեշտ էր ստուգել՝ արդյոք դա սիմուլյացիա չէ՝ անհամերաշխության պատճառով միմյանցից բաժանվելու նպատակով։

Կնոջ շրերության հարցը լուծվում էր բժշկական բնութամբ։ Նման զննության մեթոդը, րոտ Գ. Գ. Հարությունյանի, լավ հայտնի էր միջնադարի հայ բժիշկներին²⁷։ Ինչ վերաբերում է տղամարդկանց, ապա նրանց նկատմամբ կիրառվող բնության մեթոդի մասին ուղղակի տվյալներ չկան։

Այն անձանց, որոնք ունեցել են այնպիսի արատ, որը կարող էր արգելք հանդիսանալ սեռական կյանքով ապրելուն, արգելվում էր ամուսնական կապերի մեջ մտնել։ Նման դեպքերում թույլատրվում էր ամուսնալուծություն, միայն թե պահանջվում էր զննել և իմանալ, թե ինչն է պատճառը սեռական կյանքով ապրելու անընդունակության։

Ամուսնալուծության պատճառ կարող էր հանդիսանալ, վերջապես, անբարոյականությունը, այլ կրոն ընդունելը կամ համակրելը։

Սմբատի Դատաստանագիրքը մեծ տեղ է հատկացրել ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց կողմից կատարվող անբարոյակալություններին։ Այդպիսի դեպքերում որպես պատիժ տղամարդկանց համար նախատեսվել է սեռական անդամի հեռացում. «Կտրեն զերկուրն զձուս և զձետն»²⁸, այսինքն՝ ինչպես ամորձիները, այնպես էլ սեռական անդամը։ Իրավական այս նորմը վկայում է, որ Հայաստանում նման վիրահատումներ այդ շրջանում կատարվել են։ Այդ է հաստատում և 1283—1234 թթ. Նվրուպայից Կիլիկիա ուղևորություն կատարած Լևոն Բ թագավորի կողմից հյուրընկալված վանական Պրորարտի հիշատակած այն փաստը, որ արքունի պալատում նա հանդիպել է մոտ 40-ի չափ ներքինի սպասավորների, որոնք ամորձատվել էին իրենց կատարած հանցանքի համար. «... Նշանակ է և զբազմութիւն ներքինեաց՝ յորոց շատր ի պատուհաս յանցանացն արարեալ էին. և էին ի սոցանէ ի սպասու զշխոյին՝ քառասնի չափ»²⁹։

Այս կապակցությամբ մենք համամիտ ենք Լ. Ս. Խաչիկյանի հետ, որ «հանցագործների անդեպ, նայած հանցանքի չափին (պետության կողմից ներքինացման կամ մահվան դատա-

23 Նույն տեղում, էջ 47—48 (հոդվ. 22)։

24 Նույն տեղում, էջ 48 (հոդվ. «Յաղագս գիւահարութեան այրուկնաց»)։

25 Նույն տեղում, էջ 48 (հոդվ. «Վասն բողութեան, պիսակութեան եւ գողութեան»)։

26 Նույն տեղում, էջ 49—50 (հոդվ. «Վասն ամուլ կնոջ»)։

27 Գ. Գ. Арутюнян, Акушерство и гинекология в Армении с древних времен до советского периода. Докторская диссертация, 1952, и Состояние акушерства и гинекологии в древней и средневековой Армении, в. кн.։ Труды второго Закавказского съезда акушеров и гинекологов, 1937.

28 Ա. Ղլտճյան, Դատաստանագիրք Սմբատ իշխանի..., էջ 52—53 (հոդվ. 22)։

29 Ղ. Մ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 225 և 541։

պարտվելու դեպքում), բժիշկները ստանձնում էին դատարանի որոշումն իրագործողների դերժանյան դատապարտվածին դիտարկելով (գիտական նպատակներով), ներքինացման դատապարտվածին ներքինացնելով (և՛ դիտական, և՛ արքունիին անհրաժեշտ սպասավորներ մատակարարելու նպատակներով)։ Ամորձատումը կատարվում էր միայն նրա համար, «որ-պեսզի հայրերի ոճրագործություններն ընդօրինակող զավակներ չծնեն»։

Անհրաժեշտ է նշել, որ քրեական հանցագործության վերաբերյալ գործերը լսվել են միայն աշխարհիկ դատարաններում, իսկ հոգևորականներին վերաբերող, ինչպես նաև ընտանեկան, ամուսնական գործերը հիմնականում վճռվել են հոգևոր դատարանի կողմից։ Քրեական ընույթի դործեր լսելիս անհրաժեշտ է եղել հրավիրել 2—3-ից ոչ պակաս վկաներ, որոնք, ըստ Մխիթար Բողոքի Դատաստանագրքի, պետք է լինեին քրիստոնյաներ, տղամարդիկ, չափահասներ, բարեխիղճ, ճշմարտասեր և անկաշառ անձինք։

Դատավորին օգնել են «փորձված», «դիտուն» խորհրդականները, այսինքն այնպիսի անձինք, որոնք ըստ կարիքի կանչվում էին դատարան՝ մասնագիտական եզրակացություն տալու համար, կամ օգնում էին դատարանին իրենց գիտությամբ կամ փորձի հմտությամբ։ Որ իսկապես գիտական խորհրդականներ գոյություն են ունեցել դատական պրոցեսում, երևում է № 1 նկարից, որտեղ ներկայացված է դատարանների կազմը։ Այդ նկարը, որի հեղինակն է միջնադարյան հայ նշանավոր նկարիչ Սարգիս Պիծակը (1331), ցույց է տալիս Լևոն Ն-ի (Օշին թագավորի որդու) դատավարությունից մի տեսարան, որտեղ պատկերված է դատական պրոցեսը։ Ինչպես տեսնում ենք նկարում, վերևում բազմել է ինքը՝ թագավորը, որի պլխի շուրջը կա հետևյալ մակագրությունը. «Լևոն թագավորը, դատաստան»։ Նրանից ցած, աջ կողմում բազմած են երկու դատավորներ, կարծում ենք դրանք աշխարհիկ և հոգևոր դատավորներ են։ Չախ կողմից ներքևում մեղադրյալ կենն է, որին հարցաքննում է առաջին շարքում նստած դատավորներից առաջինը, իսկ ձախից կանգնած անձնավորությունը քննության տվյալները հայտնում է թագավորին։

Մենք կարծում ենք, որ մեզ հետաքրքրող հարցի տեսակետից վերջին փաստին պետք է տալ կարևոր նշանակություն։ Ինչպես հայտնի է, ինքը՝ Մխիթար Գողթի իր նախադրության հարգ գլխում խոսում է «փորձած գիտնական... արս իմաստուն...» մասին։ Ահա այստեղ պատկերված է այդ գիտնականներից մեկը, որը մասնակցելով և լսելով ամբողջ դատական պրոցեսը և նրանում առաջ քաշված հարցերը, նրանց ճշտությունը և լուծումը գիտականորեն հաղորդում է գերագույն ատյանին (թագավորին)՝ մի ֆունկցիա, որը այժմ կատարում են փորձագետները։

Նկարի մակագրությունը և դատաստանագրքերի բովանդակությունը հաստատում են, որ Հայաստանում միջին դարերում դատական պրոցեսին փորձված գիտնականների մասնակցությունը մասնակի դեպք չի եղել։

Դատական բժշկության վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ ենք գտնում նաև մեր ժին ձևագրերում, մեծ մասամբ բժշկարաններում, ինչպես և պատմական աշխատություններում, ճառերում, դասագրքերում և այլն։

Վերը շարադրված փաստերը մեզ հիմք են տալիս ասելու, որ գոյություն ունեցող դատաստանագրքերը իրենց մեջ ամփոփում են ժամանակին հայտնի եղած բոլոր հանցագործությունները։ Ընդ որում, դատաստանագրքերի հեղինակները եղել են ժամանակի խոշորագույն մտա-



Նկ. № 1

30 Լ. Ս. Խ ա շ ի կ յ ա ն, Դիտահրձումները հին Հայաստանում, տե ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1947, № 4, էջ 87։

ծոգներ և այս իսկ պատճառով նրանց կազմած դատաստանագրքերում տեղ է գտել բավականաչափ նուրբ հարցերի խորաթափանց վերլուծություն՝ ժամանակի սովորությունների արծարծմամբ և ժամանակակից գիտության մակարդակով։

Բժշկության պատմության բոլոր ուսումնասիրողները (Հովհաննիսյան Լ. Ա., Հարությունյան Գ. Գ., Կժռան Ա. Ս.) միահամուռ կերպով պնդում են, որ հին Հայաստանում գոյություն է ունեցել բավական ինքնատիպ բժշկություն, որն իր զարգացմամբ չի զիջել իր ժամանակի այլ երկրների բժշկության մակարդակին։

Հայտնի է, որ ոչ մի օրենսդրական ակտում մինչև XVI դարը, բժշկի՝ որպես փորձագետի, պրոցեսուալ վիճակի մասին չկա ոչ մի հիշատակում, թեև կասկածից վեր է, որ բոլոր երկրներում էլ, ինչպես և Հայաստանում, բժիշկները այս կամ այն դատական գործով հրավիրվել են իրրև փորձագետներ։

Ժամանակի շատ տարրեր մասնագիտության տեր մարդիկ վրադվել են բժշկությամբ, և եթե այդ անձնավորությունները (վարդապետները, գիտնականները), համարվել են փորձառու անձինք, ապա բնականաբար նրանք պետք է համարվեն դատական բժշկության մտքի կրողներ։ Բնական է և ակնհայտ, որ Անահիա Շիրակացին, Հովհան Մանդակունին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը, Մխիթար Գոշը, Սմբատ Իշխանը, Գրիգոր Տաթևացին և մյուսները լինելով ժամանակի մեծագույն մտածողներ և զարգացած անձնավորություններ, ներկայացրել են և բնագիտության այնպիսի մի ճյուղ, ինչպիսին բժշկությունն է ու նրա մասնաճյուղը՝ դատական բժշկությունը։

Բժշկի հասկացողության այսպիսի վիճակը բնորոշ էր բոլոր երկրների համար։ Եթե մյուս երկրների օրենսդրական ակտերից և ոչ մեկում չունենք ուղղակի ցուցում գիտակ մարդկանց դատարան կանչելու մասին, ապա հայկական օրենսգրքերը պահանջել են և դ։

Դատական բժշկությունը Հայաստանում այդ շրջանում, անշուշտ, չէր գտնվում սաղմնային վիճակում, քանի որ առանձին դեպքերում տեսնում ենք այդ գիտության վերաբերյալ փայլուն մտքեր ու արտահայտություններ, սակայն նրանց մասսայական բնույթ կրելու կամ դատական բժշկության՝ որպես ամփոփ մի գիտության մասին չունենք բացարձակապես և ոչ մի փաստ։

Դատական բժշկությունը նույն վիճակում է գտնվել և մյուս երկրներում։ Այստեղ կարելի է խոսել միայն որոշ առանձնահատկությունների կամ երևույթների ալելի վաղ հանդես գալու մասին։

Ն. ՄԱԿԱՐՅԱՆ

ՀԻՆ ԴԻԱՄՆԵՐԻ ՄԻ ՆՈՐ ՀԱՎԱՔԱՄՈՒ

Հայկական ՍՍՏ՝ պետական պատմական թանգարանը Մինիստրների սովետին առընթեր հաշվառավորչական եկեղեցու տարածքի խորհրդի միջոցով սփյուռքից նվեր ստացավ Կ. Պոլսի արքեպիսկոպոս Գևորգ Առաքելյանի հին գրամների հավաքածուն։ Վերջինիս մեջ հիմնական խմբերով կան հետևյալ գրամները։

№№	Գրամներ	Քանակն ըստ մետադի	
		արժաթե	պղնձե
1	Արեժենյան	2	—
2	Հունական	44	13
3	Հոռժեական	62	149
4	Պարթևական	3	—
5	Հայկական	6	10
6	Րյուգանդական	1	71
7	Մասունյան	2	—
8	Արարական խալիֆաթի	5	4
9	Մեյրանյան	35	59
10	Մանգուական	24	—
11	Իրանական շահերի	24	16
12	Թամանյան սուլթանների	65	15
13	Եվրոպական և գաղութային	29	31
14	Անորոշ ու մաշված	42	51